# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

*N ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/25-ՍՄՍ-ՃՈ-2017*

ք. Երևան 03.04.2017 թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Ա. Համբարյանի, որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՆԻԿԻՏԱ ՄՈԲԱՅԼ» ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Լ. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելիմաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարել իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Ողջամիտ ժամկետում Պատվիրատուից ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են Ծառայության մատուցման ճիշտ և ժամանակին կազմակերպման համար:

2.3.3 Հրաժարվել Ծառայությունների մատուցումից, եթե դրանք հակասում են ՀՀ օրենսդրության պահանջներին կամ Կատարողի հնարավորությունները բավարար չեն դրանք կատարելու համար:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 2) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 2.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից եռօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության միավորի գները ներկայացված են պայմանագրի Հավելված 1-ում:Մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.2 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝3 000 000 (երեք միլիոն)ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ միջոցներ նախատեսված չեն, Ծառայությունը կմատուցվի հաջորդող տարիներին ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի[1]:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի 4.1.2 կետի համաձայն կնքված լրացուցիչ համաձայնագրով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը.:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

---

[1] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Գործադրող) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ոստիկանություն | «ՆԻԿԻՏԱ ՄՈԲԱՅԼ» ՍՊԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 130 | ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 9, |
| ՀՀ Ֆինանսների նախարարության | 410 սենյակ |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Կոնսալտինգ» ՓԲԸ |
| Հ/Հ 900013150041 | ՀՀ [illegible]0430100 |
| ՀՎՀՀ 01840082 | ՀՎՀՀ 02701[illegible] |
| հեռ. 59-60-39 | էլ. հասցե՝ liana@nikita.am |
| էլ. Փոստ: police-gnumner@rambler.ru | հեռ. (010) 512072 |
| _____ Ա. Հարությունյան | _____ Լ. Սրբազյան |
| /ՀՀ ոստիկանության [illegible] | (ստորագրություն) |
| (ստորագրություն) | Կ.Տ |

*Հավելված թիվ*
*03.04. 2017թ. թիվ «ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/25-ՍՄՍ-ՃՈ-2017» գնման պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ձեռքբերվող Ծառայության նկարագիր |
|---|
| Տեխնիկական սարքերի միջոցով հայտնաբերված ՃԵԿ խախտումների համար կազմված վարչական որոշումների վերաբերյալ SMS-հաղորդագրություններ ուղարկելու ծառայության իրականացում |

**Նպատակը:**

Ծառայության մատուցումը նպատակ ունի ապահովելու տեխնիկական սարքերի միջոցով հայտնաբերված ՃԵԿ կանոնների խախտումների համար կազմված վարչական որոշումների վերաբերյալ sms հաղորդագրությունների միջոցով լրացուցիչ ծանուցում իրականացնել նախորոք հայտ ներկայացրած օգտվողներին:

**Հարթակի Կառուցվածքը:**

Հարթակը կազմված է երեք բաղկացուցիչ մասից՝

1. Sms հաղորդագրություններ ստանալու հայտատուների տվյալների հավաքագրում (երկու տարբերակներ՝ SMS-հաղորդագրության միջոցով կարճ համարին տվյալների ուղարկում , ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքում տվյալների մուտքագրում)
2. տվյալների մշակում և օգտագործում՝ տուգանքների առկայության դեպքում SMS -ծանուցում
3. հաշվետվություններ ուղարկված և ստացված հաղորդագրությունների վերաբերյալ

**1. Հայտատուների տրանսպորտային միջոցի և հեռախոսահամարի վերաբերյալ տվյալների ստացում**

***ա) Կարճ համարին հայտատուների կողմից SMS-հաղորդագրություն ուղարկելու միջոցով տվյալների փոխանցում ՃՈ էլեկտրոնային հարթակին/բազային.***

Անձը, որը ցանկանում է ստանալ SMS-ծանուցում տեխնիկական սարքերի միջոցով հայտնաբերված ՃԵԿ խախտումների համար կազմված վարչական որոշումների վերաբերյալ (այն հեռախոսահամարից որին հետագայում ցանկանում է ստանալ SMS-ները) նախորոք սահմանված կարճ համարին, օրինակ՝ 1041, ուղարկում է SMS նշելով տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի համարը և հաշվառման համարանիշը, դրանով իսկ տալով իր համաձայնությունը այդ հեռախոսահմարին ստանալ տվյալ տրանսպորտային միջոցով կատարած իրավախախտումների համար կազմված վարչական որոշումների վերաբերյալ *SMS*-ծանուցումները:

նկար 1.




Անձի կողմից կարճ համարին ուղարկված sms-հաղորդագրությունը բջջային կապի օպերատորի կողմից ուղարկվում է միջանկյալ սերվերին, որն իր հերթին կապուղու միջոցով անձի նշած տվյալները ուղղորկում է ՃՈ սերվեր:

***բ) ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքում հայտ ներկայացնելու միջոցով տվյալների փոխանցում ՃՈ էլեկտրոնային հարթակին***

ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքում ստեղծվում է ենթաբաժին, որի առաքելությունն է լինելու անձանց հեռախոսահամարների, տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրերի և հաշվառման համարանիշերի տվյալների հավաքագրումը: Կայքէջում լրացնելով պահանջվող տվյալները քաղաքացին տալիս

է իր համաձայնությունը ստանալ SMS-ծանուցումներ խախտումների վերաբերյալ:

նկար 2.

Նախ անձը պետք է նշի այն հեռախոսահամարը որին ցանկանում է ստանալ տրանսպորտային միջոցի վերաբերյալ տուգանքների SMS-ծանուցումները, ապա նշի այդ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի և հաշվառման համարանիշի տվյալները: Տվյալները հավաքագրվում են սերվերի մեջ, որը իր հերթին տվյալները փոխանցում է ՃՈ սերվերում պահվող հարթակին:

Եթե ՃՈ սերվեր հասած տվյալները ճիշտ են՝ առկա է նման հաշվառման վկայագրով և հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոց, ապա քաղաքացուն նույն ճանապարհով ուղարկվում է պատասխան SMS՝ «Հարգելի քաղաքացի Ձեր տվյալները բարեհաջող գրանցված են SMS–ծանուցման էլեկտրոնային հարթակում Շնորհակալություն: ՀՀ ոստիկանություն: Hargeli qaxaqatsi, Dzer tvyalenery barehajokh grantsvats en sms-tsanutsman elektronayin hartakum, shnorhakalutyun, HH Vostikanutyun. » :

Եթե ուղարկված տվյալների մեջ առկա է սխալմունք՝ օրինակ իրար չհամընկնող հաշվառման համարանիշով և հաշվառման վկայագրով տվյալներ, ապա նույն ճանապարհով SMS ուղարկած անձին ուղարկվում է պատասխան SMS՝ <<Հարգելի քաղաքացի, տվյալները չեն համապատասխանում, ստուգեք և կրկին ուղարկեք տրանսպորտային միջոցի ճիշտ տվյալները: Շնորհակալություն: ՀՀ ոստիկանություն: Hargeli qaxaqatsi, nshvats tvyalnery chen hamynknum, stugeq ev krkin ukharkeq transportayin mijotsi chisht tvyalnery, shnorhakalutyun, HH Vostikanutyun. >>:

Եթե տվյալ հեռախոսահամարից նախկինում ուղարկվել է նույն տրանսպոտային միջոցի տվյալները, ապա քաղաքացուն ուղարկվում է պատասխան SMS՝ << Հարգելի քաղաքացի, այս հեռախոսահամարը և տրանսպորտային միջոցի տվյալները արդեն իսկ առկա են ոստիկանության էլեկտրոնային հարթակում: Շնորհակալություն: ՀՀ ոստիկանություն: Hargeli qakhaqaci, ays herakhohamary ev transportayin mijotsi tvyalnery arden isk arka en vostikanutyan elektronayin hartakum, shnorhakalutyun, HH Vostikanutyun. >>:

2. Տվյալների մշակում և օգտագործում

ՃՈ սերվեր հասած ճշգրիտ ուղարկված տվյալները հավաքագրվում են ՃՈ սերվերի էլեկտրոնային հարթակում, արդյունքում ստեղծվում է բազա որտեղ նշված է՝

նկար 3.

| հաշվառման վկայագրի համար | հաշվառման համարանիշ | Հեռախոսահամար |
|---|---|---|
| XX000000 | XXyyZZZ | +374 XX XX XX |

Հարթակում հավաքագրված տվյալները հետագայում օգտագործվելու են անձանց SMS-ծանուցումներ ուղարկելու համար, այս ճանապարհով՝

նկար 4.

SMS-ում ներառվելու են **որոշման համարի** և **տուգանքի գումարի** չափի վերաբերյալ տեղեկատվություն:

**3. Հաշվետվություններ ուղարկված և ստացված հաղորդագրությունների վերաբերյալ**

Պետք է ստեղծվի ուղարկված և ստացված հաղորդագրությունների վերաբերյալ հաշվետվական այնպիսի գործիքիկազմ, որը թույլ կտա ստանալ անհրաժեշտ հաշվետվություն ըստ ժամանակահատվածի, որոշման համարի, հեռախոսահամարի և նրանց համադրության:

**4. Ընդհանուր պահանջներ**

Կատարողը Պատվիրատուին աշխատանքի ավարտին հանձնում է

- ՄՀ-ի աշխատունակությունը ապահովող ֆայլ(երի) վերջնական տարբերակները
- ՄՀ-ի աշխատանքի համար անհրաժեշտ գրադարանային ֆայլերը (ըստ մատակարարվող գործարկվող ֆայլի տարբերակների)
- Տվյալների Հենքի ստեղծման սկրիպտերը (ըստ մատակարարվող գործարկվող ֆայլի տարբերակների)
- Տվյալների Հենքի օբյեկտների (աղյուսակ, տրիգեր, պրոցեդուրա, ֆունկցիա և այլն) ստեղծման սկրիպտերը (ըստ մատակարարվող գործարկվող ֆայլի տարբերակների)
- Տվյալների Հենքի տրամաբանական մոդելի նկարագրությունը (ներառյալ օբյեկտների լիարժեք նկարագրությունը)
- Համակարգի աշխատունակությունը ապահովող նվազագույն տեխնիկական պահանջների նկարագրությունը

Կատարողը իրականացնում է

- Ներդրման/տեղակայման և կարգաբերման աշխատանքները
- Էլեկտրոնային կապուղու ապահովում
- Ծրագրային մասի երաշխիքային ուղեկցում 12 ամիս:

Հաղթողի առաջնահերթությունը կտրվի այն մասնակցին, որը կառաջարկի հարթակի ծրագրային իրականացման արժեք + 100000 հատ. SMS արժեքի համար լավագույն գինը:

1 կարճ հաղորդագրության (SMS-ի) արժեքը 5 (հինգ) ՀՀ դրամ :

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | ավարտը |
| Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու պահից | Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու պահից, բայց ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
Հ/Հ 900013150041
ՀՎՀՀ 01840082
հեռ. 59-60-39
Էլ. Փոստ: police.minister@rambler.ru

_____
/ՀՀ ոստիկանության [illegible]/
(ստորագրություն)

**Կ ա տ ա ր ո ղ**

**«ՆԻԿԻՏԱ ՄՈԲԱՅԼ» ՍՊԸ**
ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 9,
410 սենյակ
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930009490430100
ՀՎՀՀ 02701579
Էլ. հասցե՝ liana@nikita.am
հեռ. (+374 010) 512077

_____ Լ. Ավագյան /Տնօրեն/
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
<< >> << >> 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1
<< >> << >> 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

**պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------ -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. -------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## N ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/25-ՍՄՍ-ՃՈ-2017 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** <31> 05. 2017թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր **Ա. Համբարյանի,** որը գործում է ոստիկանության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՆԻԿԻՏԱ ՄՈԲԱՅԼ» ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Լ. Ավագյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող) հիմք ընդունելով 03.04.2017թ.-ին կնքված ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/25-ՍՄՍ-ՃՈ-2017 գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 4.1.2 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը**

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին մատուցել Պայմանագրի N1 Հավելվածով նախատեսված ծառայությունը /այսուհետև Ծառայություն/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայությունը և վճարել դրանց համար:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **3 000 000** (երեք միլիոն) ՀՀ դրամ: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Պատվիրատուն **3 000 000** (երեք միլիոն) ՀՀ դրամ գումարի վճարումը կատարում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԿԱ ոստիկանությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | Կ ա տ ա ր ո ղ |
|---|---|
| **ՀՀ ոստիկանություն**<br>**ք. Երևան, Նալբանդյան 130**<br>**ՀՀ Ֆինանսների նախարարության**<br>**աշխատակազմի գործառնական վարչություն**<br>**Հ/Հ 90001315004**<br>**ՀՎՀՀ 01840082**<br>**հեռ. 59-60-39**<br>**էլ. Փոստ: police-grush@mfe.am** | **«ՆԻԿԻՏԱ ՄՈԲԱՅԼ» ՍՊԸ**<br>**ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 9,**<br>**410 սենյակ**<br>**«Կոնվերսբանկ» ՓԲԸ**<br>**Հ/Հ 1930009490430100**<br>**ՀՎՀՀ 02701579**<br>**էլ. հասցե: liana@nikita.am**<br>**Հեռ. (010)-512077** |
| _____ Ա. Համբարյան<br>/ՀՀ ոստիկանության գլխավոր տեսուչ/<br>(ստորագրություն)<br>Կ.Տ | _____ Լ. Ավագյան<br>/Տնօրեն/ (ստորագրություն)<br>Կ.Տ |

**Հավելված N 1**
**<< 31 >> 05 2017թ.**
**ՀՀ ԿԱ Ո-ՇՀԾՁԲ-15/25-ՍՄՍ-ՃՈ-2017 *ծածկագրով գնման պայմանագրի***

**Վճարման ժամանակացույց**

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. արտաբյուջեից | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| *1* | Կարճ հաղորդագրությունների ուղարկման ծառայություններ | | | | | | ***1 500 000*** | ***2 250 000*** | ***2 250 000*** | ***2 250 000*** | ***3 000 000*** | ***3 000 000*** | ***3 000 000*** | ***3 000 000*** |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | ***3 000 000*** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**ՀՀ ոստիկանություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**աշխատակազմի գործառնական վարչություն**
**Հ/Հ 900013150041**
**Կոդ՝ 01840082**
**Հեռ. 59-60-39**
**Էլ. Փոստ՝ [redacted].ru**

[redacted]
/ՀՀ ոստիկանության գործառնական տեսչության պետ՝ տեղակալ/
(ստորագրություն)

**Կ ա տ ա ր ո ղ**

**«ՆԻԿԻՏԱ ՄՈԲԱՅԼ» ՍՊԸ**
**ՀՀ, ք. Երևան, Ալեք Մանուկյան 9,**
**410 սենյակ**
**«Կոնվերսբանկ» ՓԲԸ**
**Հ/Հ 1930009490430100**
**ՀՎՀՀ 02701579**
**էլ. հասցեն՝ liana@nikita.am**
**Հեռ. (010) 512077**

**Լ. Ավագյան**
/Տնօրեն/ (ստորագրություն)

Կ.Տ